## ՆՇՈՒՄ ԵՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՏՈՆԵԼԻՔԸ

Авангард
Арм. 25 окт. 78 г.
Выставка Р. Хачатрян
в СХ СССР
Гоголев. б-р.



Բազմամարդ էր ...ի Դանիել Վարուժանի անվան № 89 դպրոցի դահլիճը: Այստեղ էին աշակերտներ, ուսուցիչներ, հյուրեր հարևան դպրոցներից, ծնողներ: Հանդես էր դպրոցում. նշվում էր Արևելյան Հայաստանի Ռուսաստանի կազմի մեջ մտնելու 150-ամյա հոբելյանը:

Հնչեցին երգ, նվագ, արտասանություններ: Ունկնդիրները մեծ հուզմունքով լսում էին Արմենակին և Ռուզանին, որոնք ժամանակաշրջան ու ժամանակաշրջան պատմում էին հայ ժողովրդի, նրան բաժին հասած անլուր դաժանությունների և ռուս զինվորի փրկարար առաքելության մասին: Անահիտը, Լեյլան, Անդրանիկը, Սոֆյան, մյուսները կենդանի գույներով ներկայացրին այդ բոլորը: Տ. ՈՍԿԱՆՅԱՆ

# ՌՈՒԴՈԼՖ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ

ՄՈՍԿՎԱ (Արմենպրեսի հատուկ թղթ. Վ. Սանթրյան): Կերպարվեստի երկրպագուները մեծ հետաքրքրությամբ ծանոթացան Հայկական ՍՍՀ վաստակավոր նկարիչ Ռուդոլֆ Խաչատրյանի ստեղծագործությունների ցուցահանդեսին, որը հոկտեմբերի 18-ին բացվեց ՍՍՀՄ նկարիչների միության տանը: Դիմելով ներկաներին, ՍՍՀՄ նկարիչների միության վարչության առաջին քարտուղար, ՍՍՀՄ գեղարվեստի ակադեմիայի իսկական անդամ, Սովետական Միության ժողովրդական նկարիչ Թ. Սալախովն ասաց.

— Այս օրերին նշվում է հայ ժողովրդի կյանքի նշանակալից իրադարձություններից մեկը՝ Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման 150-ամյակը: Տոնական այդ մեծ շղթայի օղակներից մեկը երիտասարդ, տաղանդավոր նկարչի ստեղծագործությունների ներկա ցուցահանդեսն է, մի արվեստագետի, որի աշխատանքները բազմիցս ներկայացվել են ինչպես մեր երկրում, այնպես էլ արտասահմանում, հեղինակին բերելով մի շարք մրցանակներ ու դիպլոմներ: Ռուդոլֆ Խաչատրյանի գործերը աչքի են ընկնում մարդու հոգեկան ներքնաշխարհի նուրբ ընկալմամբ, կատարման բարձր վարպետությամբ ու պատասխանատվությամբ:

Իրենց ելույթներում արվեստագետի աշխատանքները բարձր գնահատեցին նաև Հայաստանի նկարիչների միության վարչության նախագահ, հանրապետության ժողովրդական նկարիչ Ս. Սաֆարյանը, ՌՍՖՍՀ նկարիչների միության վարչության նախագահ, ՍՍՀՄ գեղարվեստի ակադեմիայի իսկական անդամ, Ռուսաստանյան Ֆեդերացիայի ժողովրդական նկարիչ Ս. Տկաչովը:

Այնուհետև շնորհակալական խոսք ասաց Ռ. Խաչատրյանը:

ՍՍՀՄ նկարիչների միության երեք սրահներում ներկայացված են հիսունից ավելի գրաֆիկական դիմանկարներ, որոնք հեղինակն ստեղծել է վերջին վեց տարիներին: Դրանցից են դաշնակահարուհի Լեքսո Թորաձեի, արվեստաբան Հենրիխ Իգիթյանի, կինոռեժիսոր Շվեյցերի դիմանկարները, ինքնադիմանկարը և այլ գործեր:

Ռ. Խաչատրյանի ցուցահանդեսի բացմանը ներկա էին ՀԿԿ Կենտկոմի կուլտուրայի բաժնի վարիչ Գ. Առաքելյանը, Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրի առաջին տեղակալ Մ. Խարազյանը, անվանի կերպարվեստագետներ, գրողներ, թատրոնի և կինոյի գործիչներ:

### ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման 150-ամյա հոբելյանը Լենինականի մշակութային կյանքում նշանավորվեց հայ-ռուսական բարեկամության թանգարանի հիմնադրումով: «Սլոբոդկա» թաղամասում, ռուսական նախկին եկեղեցու շենքում, օրերս կայացավ թանգարանի հանդիսավոր բացումը:

Ճարտարապետական այդ գեղեցիկ հուշարձանի ընդարձակ սրահում ցուցադրված նմուշները խորհրդանշում են երկու ժողովուրդների լավագույն զավակների արյամբ սրբագործված դարավոր բարեկամությունն ու եղբայրությունը: Ցուցահանդեսի զգալի մասն են կազմում լուսանկարները, արխիվային նյութերն ու հավաքածուները: Այցելուների ուշադրությանն են արժանանում նաև ռուս-պարսկական պատերազմի ժամանակ գործածված զենքերը, հայ-ռուսական բարեկամությունն արտացոլող գեղանկարչական աշխատանքները:

Թուրքմենչայի պայմանագրի, ականավոր դիվանագետ Ալ. Գրիբոյեդովի առաքելության, հայ կամավորական ջոկատների մասին են պատմում «Արևելյան Հայաստանի միավորումը Ռուսաստանի հետ», «Ռուս նշանավոր զորավարները և ռուս-պարսկական պատերազմին հայերի մասնակցությունը» ստենդները:

(Արմենպրես)

# ՊՐՈՊԱԳԱՆԴՎՈՒՄ Է ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակակից արվեստի թան... գարանում բացվել է երիտասար... գեղանկարիչների ցուցահանդե... որտեղ ներկայացված են յոթ նկ... դիչների՝ Ա. Հակոբյանի, ... Աբովյանի, Հ. Գարուկյանի, ... Կարապետյանի, Կ. Մկրտչյանի, ... Խանզադյանի և Գ. Խաչատրյա... ստեղծագործությունները: Նրան... բոլորը համամիութենական և հա... րապետական ցուցահանդեսներ... ակտիվ մասնակիցներ են, նրան... առանձին ստեղծագործություննե... ցուցադրվել են արտասահմանու...

— Սա առաջին խմբային եր... տասարդական ցուցահանդեսն է ա... շարքից, որ սրա աղեն երկ... տարի կազմակերպվում է մե... մոտ,— ասաց թանգարանի դիրե... տոր Հ. Իգիթյանը:— Ցուցահա... դեսը բացվել է այն դահլիճում, ... րը հատկապես առանձնացված ... Հայաստանի նկարիչների երիտա... սարդ ներթափանցի ստեղծագործո... թյան լայն ցուցադրման համա... Ըստ ավանդույթի, այստեղ ան... կացվում են նրանց աշխատան... ների առաջին անհատական ցուց... հանդեսները, որոնք դառնում ... մեծ արվեստի յուրատեսակ «... դեգիր»: Ամեն տարի ավելի ... տասը նկարիչներ ֆոնդառների ... արվեստասերների դատին են նե... կայացնում իրենց ստեղծագործո... թյունները, որոնք գովերգում ... հայրենի երկրի բարգավաճումը:

(Արմենպրեսի թղթ...